

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/8

18 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Ընդերքաբեր» ՍՊԸ 29.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նաիրիի ՏՀՏ 23.10.2014 թ-ի թիվ 5010434 ստուգման ակտի դեմ:

«Ընդերքաբեր» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության Նաիրիի տարածքային հարկային տեսչության կողմից «Ընդերքաբեր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտում /ակտ թիվ 5010434/ առկա են իրականությանը չհամապատասխանող տվյալներ, ուստի հայտնվում է, որ «Ընդերքաբեր» ՍՊԸ-ն ունի ընդերքօգտագործման թույլտվություն և իրականացրել է արդյունահանման աշխատանքներ, իսկ ընդերքի տեղամասից որոշակի շեղումը կապված է եղել այն հանգամանքի հետ, որ ընդերքօգտագործման թույլտվությունը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրամադրված է եղել ՏԿ-42 կոորդինատային համակարգով, իսկ ստուգումը կատարվել է միասնական կոորդինատային համակարգով:

Վերոնշյալ խնդիրներից ելնելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից 15.07.2014 թ-ի թիվ 99-Ա հրամանով հաստատվել է ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված հանքավայրերը, երևակումները բնութագրող ՏԿ-42 կոորդինատային համակարգի կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգի կոորդինատներով փոխարինելու մասին կարգը, որոնց ճշտման պարագայում կոորդինատների սխալը կազմում է մինչև 100մ, իսկ ընկերության հանքավայրի սխալը կազմել է 50մ: Միաժամանակ հայտնվում է, որ հարկային տեսչության կողմից «Ընդերքաբեր» ՍՊԸ-ում ստուգում է իրականացվել 2011 թ-ին, չափագրում՝ 2012 թ-ին և էական խախտումներ չի հայտնաբերվել:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացրել է բարեխղճորեն՝ իրեն տրամադրված իրավունքներին համապատասխան, հարկային և սոցիալական ապահովության պարտավորությունները կատարել է ժամանակին և հանույթին համապատասխան ոչ մի խախտում չի կատարել, տարածքից շեղումը պայմանավորված է եղել վերը նշված հանգամանքներով, ինչն էլ արձանագրվել է ընդերքի պետական տեսչության կողմից, որն արձանագրել է ոչ թե ապօրինի ընդերքօգտագործում, այլ՝ ընդամենը օգտակար հանածոների արդյունահանման հաստատված նախագծերից շեղումներ, որոնք առաջացրել են ընդերքի մասին հավաստի տեղեկատվության և օգտակար հանածոների արդյունավետ օգտագործման էական խախտումներ:

Վերը նշվածի համար Ընկերությունն արդեն իսկ ենթարկվել է տույժի (կցվում է տեսչության որոշումը):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է վերադասության կարգով վերանայել ակտը և կայացնել արդարացի որոշում:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ֆինանսների նախարարի 08.08.2014 թ-ի թիվ 5010434 հանձնարարագրի համաձայն «Ընդերքաբեր» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 23.10.2014 թ-ին կազմվել է թիվ 5010434 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Քննարկվող դեպքում ընկերության գանգատը վերաբերվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից իրականացված ստուգմամբ արձանագրված տվյալների հիման վրա Նաիրիի ՏՏՏ 23.10.2014 թ-ի թիվ 5010434 ստուգման ակտով արձանագրված խախտումներին: Մասնավորապես, ստուգման ակտի 13-րդ կետով արձանագրվել է, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից 08.08.2014 թ-ի թիվ 200030 հանձնարարագրի համաձայն ընկերությունում իրականացվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգում: Ստուգման արդյունքում պարզվել է, որ ընկերությունը ստուգվող ժամանակահատվածում ընդերքշահագործում է իրականացրել ընդերքօգտագործման իրավունքի փաստաթղթերի փաթեթով շահագործման նպատակով տրամադրված տեղամասի սահմաններից դուրս:

Հիմք ընդունելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 9-րդ, 18-րդ կետերի, 54-րդ հոդվածի 3-րդ մասի, 59-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետի դրույթները, ընկերությանը տրամադրված պաշարներով տեղամասի եզրակետերի կոորդինատներից դուրս նախագծային շեղումներով հանքարդյունահանումը դիտարկվել է վերջինիս կողմից առանց թույլտվության կամ առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացում, ինչն առաջ է բերում ընդերքօգտագործողի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման:

Հաշվի առնելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտով արձանագրվածը, որ ստուգվող ժամանակահատվածում ընկերության կողմից ընդերքշահագործում է իրականացվել ընդերքօգտագործման իրավունքի փաստաթղթերի փաթեթով շահագործման նպատակով տրամադրված տեղամասի սահմաններից դուրս, ստուգման ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները, այն է՝ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ

պակաս 500.000 դրամից, ինչպես նաև գանձվում է լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում: Արդյունքում ընկերությանն առաջադրվել է վճարման 5.500.000 դրամ:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի 13-րդ կետով լրացուցիչ պարտավորությունների առաջադրման համար հիմք են ընդունվել լիազոր մարմնի՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտով արձանագրված խախտումները: Այսինքն, հարկային մարմնի կողմից ընդամենն իրականացվել է լիազոր մարմնի արձանագրված խախտումների գծով պարտավորությունների հաշվարկ: Հետևապես, Նաիրիի ՏՏՏ 23.10.2014 թ-ի թիվ 5010434 ստուգման ակտով առաջադրված պարտավորությունների հետ համաձայն չլինելու դեպքում ընկերության կողմից նախ պետք է վիճարկվեն լիազոր մարմնի՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության վերոգրյալ ստուգման ակտով արձանագրված խախտումները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նաիրիի ՏՏՏ 23.10.2014 թ-ի թիվ 5010434 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանում:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. ԱՐԻՈՒՄՅԱՆ